

Հ Ն Չ Ա Կ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՄԵԿԻՆ ԵՒ ՄԻՒՍՆԵՐԻՆ.

Յեղափոխութեան գաղափարի երգուեալ թըշնամիներն այսօր բարձրացրել են իրանց գլուխները: Տակաւին չորս-հինգ ամիս առաջ նրանք չէին յանդգնում իրանց դէմքերը ցոյց տալ լոյսի տակ: Աւ ի՞նչպէս ցոյց տային, քանի որ յեղափոխական գաղափարը յաղթանակ յաղթանակի ետեւից էր տանում ամենափայլուն կերպով՝ սկսած Սասունի գէպքերից մինչև Օհայթի ապստամբութիւնը: Հայ անպզան, հայ անտարբերն իսկ ցնցվեցան և հայրենիքի վերականգնման յոյսերը բառբառ տվին նրանց հոտը լեզուին: Իսկ միւսները — յեղափոխութեան գաղափարի թշնամիները — ձնշված ու ոչնչացած հայութեան բարոյականի բարձրանալովը, նրա առած թռիչից, ըստիպված էին սիրամարզի փետուրներով զարդարել իրանց, ստիպված էին զոհութեան ժպիտ ցոյց տալ իրանց ժանտ ջրթների կողերին, ստիպված էին թաղցնել իրանց թունաւոր խօսքերը: Հրաշալի՜ բոլորէ, երբ, կարծես, յեղափոխական գաղափարը մաքրել էր այլ ևս ընդ միշտ հայերի միջից ամեն վատ գղացման և ամեն պառաւտած մաքր ամեն արտայայտութիւնները, երբ, կարծես, այլ ևս բուժված պէտք էր հասարակ հայերի ստրկական զգացման ու անբարոյականացած մտքի, հնարաշուտութեան ու յեառադիմութեան հինօրեայ փրտախտը:

Իայց հայերի այդ ընդհանուր բարոյական վերածնութեան միջոցին յանկարծ դուրս պրծաւ րէակցիայի (հակազգեցութեան) հրէշը՝ հեղնոտ, խարդախ, լիբբ քմծիծաղով: Այդ րէակցիան ծնունդ առաւ հայոց կոտորածների արեան միջից, արիւն, որ սուլթանի նենգութեամբ ու եւրօպական տէտութիւնների դաւաճանութեամբ հեղեղեց ամբողջ Հայաստանը: Աւ ահա նրանք, որ երէկ չէին յանդգնում իրանց ձայնը բարձրացնել, այսօր օգտովելով ազգային ընդհանուր սարսափելի աղէտից, սկսել են փորձել իրանց նենգամտ միտումների թոյնը թափել յեղափոխական գաղափարի և զբաւանձնուրաց զինւորների վրայ: Ամեն-մէկ անկիւնում, գաղտագողի, կամ տգէտների բազմութեան առջև նրանք որսաւնցնում են այսօր իրանց դեղեղի ձառերն ու քարոզները յեղափոխութեան

դէմ, նրանք ձիգ են թափում զրգուել հասարակաց կարծիքը յեղափոխականների դէմ: Մեր դատի ներկայ ծանր ճղնաժամն այդպիսի յետագէտներին կամ նենգաւորներին արդէն տալիս է ամեն հարկ եղած երևոյթը՝ իրանց թունաւորիչ ու ապականող քարոզներն աջողութեամբ առաջ մղելու ու տարածելու: Աւ ո՞րքան կեղտոտ ամբաստանութիւններ, և ո՞րքան զզուելի զրպարտութիւններ, և ո՞րքան անհեթեթ, որպէս և խարդախ մտքեր ու կարծիքներ են նրանք տարածում աջ ու ձախ: Այդ մարդիկն այսօր շահագործում են ազգի թափած արիւնն իրանց կրքերի ու նենգութեան, հնարաշա կամ անխոտտ վտնելի մտքերի համար, որոնցով դեռ մի քանի ամիս առաջ չէին յանդգնում երևան գալ:

Աւ այդ մարդիկը ձիգ են թափում Արիւնտաւի Ամիսների պատասխանատուութիւնը զցել յեղափոխականներին վրայ, առարկելով, թէ եթէ մենք յեղափոխութիւն անել չուզենայինք, այդ արիւնն էլ չէր լինիլ: Պարզամիտների վրայ այդպիսի առարկութիւն կարող է ազդել թերևս, բայց այդպիսի քարոզներ անողները դուրս չեն դուրսկում իսկ, որ իրանց այդ խօսքերով որքան նենգամիտ, նոյնքան էլ իղիօտ, տխուր են ներկայանում իրանք: Արովհետև հասարակական պահանջներն ու ձգտումներն առաջ չեն գալիս առանձին անհատների երևակայութիւնից, ֆանտազիաներից, այլ նրանք առաջ են գալիս ազգութեան մէջ տարիների ընթացքում տեղի ունեցող իրերի վիճակից: Եթէ հայոց մէջ երևան եկաւ յեղափոխական գաղափարը, դա պարզ ապացոյց է, որ հայ ազգի վեճակի պահանջներն ու ձգտումները յանգան յեղափոխական գաղափարի վրայ, առաջ բերին յեղափոխական գաղափարն ու կոիւն, իբրև անհրաժեշտ միջոց ու միակ պայման հայ ազգի վեճակի փոփոխման դէպք լաւը:

Իայց կուր մէջ կան բոլորներ աջողութեան ու անաջողութեան: Ահա հէնց այս վերջին բուպէին է, որ ամեն զարգացման ու առաջադիմութեան զիտակցական ու անզիտակցական թշնամիները երևան են դալիս իրանց ազգութեան ամբողջ մերկութեամբ և իրանց ապականող շունչը փչում միամիտների ու տգէտների սրտում: Վրանք, այդ թշնամիներն առաջադիմութեան, ուրեմն և

յեղափոխական գաղափարի ու կուռի, ամենավատ թշնամիներն են հայութեան, և ներկայ բուսական նրանք իրանց անձողնի ու հրէշաւոր քարոզներով գերեզմանափորներն են հայ ժողովրդի:

Հայկական դատն այսօր դանձուր է մէկ ամենաճանր ձգնաժամում, որպիսին երբէք չէ ունեցել: Աւ սակայն պէ՛տք է արդեօք դրանից հեռուեցնենք, որ մեր դատն այլ ևս «կորած» է, որ այլ ևս ո՛չ մի յոյս չունենք մեր փրկութեան, ինչպէս ուզում են հաւատացնել միամիտներին նենգամտ յետադէմները: Պէ՛տք է արդեօք այդպիսի տրամաբանութեան հեռուելով երեսի վրայ թողնենք մեր դատը, երեսի վրայ թողնենք մեր անպաշտպան ու լքված ժողովրդին, երեսի վրայ թողնենք մեր ազգի ճակատագիրը, որն, աւա՛ղ, այնպիսի չարաչար վատութեամբ կամ ակամարութեամբ անպատվում է ծակ ու ծուկից դուրս պրծած ամեն-մի ներքին թշնամի: Կրակունք ունե՛նք արդեօք ժամանակաւոր ձախորդութեան և թէկուզ հէնց մի սուկայի աղէտի պատճառով անդիտանալ այն պատմական մարդկային ու քաղաքական իրաւունքները, որոնց ձեռք բերելու համար է տանձվում, կուռում ու կոտորվում հայ ժողովուրդը: Այլ և ընդհակառակը, մեր պարտականութիւնը չէ՛ արդեօք լինել միշտ պատրաստ պահակ մեր պատմական իրաւունքների ու ձգտումների, միշտ առաջ տանել արդարութեան ու մարդկութեան գործը, միշտ լինել ջատագով ու պաշտպան մեր պատուի ու կեանքի: Աթէ մեր զիտակցութիւնը երկիւղի ու երկչոտութեան, թուլութեան ու անբարոյականութեան մէջ է ընկղմվում մեր ազգային կեանքի այս ամենաճանր բուսական, հապա երբ է և ինչո՞ւմ է, որ մենք պէտք է ցոյց տանք մեր իրաւունքն իբրեւ ազգ եւ իբրեւ մարդ: Մեր տասնեակ ու տասնեակ հազարաւոր եղբայրների արեան կարմիրն այսօր շատ աւելի պայծառ ու բարձր յաղթանակ է մեր ազգի համար մարդկութեան ու պատմութեան առջև, քան մեր հրէշաւոր թըռնամու ոճրագործական դրօշակի ծածանումը Արլդրդ Վեօշի գլխին: Վան պատմական բուսական ազգի կեանքում, երբ նա կուռում է, ջարդվում է, մոթվում է, սպանվում է, այ՛, բայց և ազազակում է շարունակ, ինչպէս հերոսական ժամանակներում՝ «Մեռնել ազատութեան համար — արժէ»...

Աւ մինչդեռ մեր ներքին թշնամիները ջանք են անում աւելի վճատեցնել ու անբարոյականացնել հայ հասարակաց կարծիքը և ցոյց տալ թէ այլ ևս հայ ազգը «կորած» է, միւս կողմից տեղի ունի մէկ ուրիշ կերպ նշանաւոր փաստ. — Մեր թիւրք մեծ թշնամին, ինքը սուլթան Համիդը, սենեկով իր և իր տէրութեան մօ-

տալուտ անկման վտանգը, որ այսօր սպառնում է նրան թէ ներքնապէս և թէ արտաքին կերպով, որպէս նաև զգալով շարունակ իր գլխին կախված հայ յեղափոխական սուրբ և հայ յեղափոխականների զօրութիւնը, որից կարող է առաջ գալ թիւրքիայի անկումը, — մեր այդ թշնամին, ասում ենք, ընկած այդ անելանելի վիճակում, ըստիպված՝ այսօր զիմում է ուղղակի մեզ, հայ յեղափոխականներին, ստորացած աղաչանքներով: Այ՛, նոյն ինքը Համիդը այստեղ, Վօնդօն է ուղարկել մի յատուկ պատգամաւոր, որպէս զի բանակցէ հայ յեղափոխականներին հետ և «ընդարձակ բարենորոգումներ» մտցնելու ամեն խոստումներ անի ուղղակի մեզ սուլթանի կողմից, ինչ որ եւ լ ո վ մեր կողմից էլ դրա փոխարէնը՝ հըրաժարվել յեղափոխական քարոզներից: Հա՛, հա՛, պատաւ աղուէն այնքան էլ խորամանկ չէ, որքան վախկոտ, այնքան էլ ճարպիկ չէ, որքան անձարակ: Թող երթայ նա իր ձանքով. կան բուսական, երբ մեր կատաղութիւնը տեղի է ապրիս մեր զուլանքին ընդդէմ այն պատմական Չարագործի, որ այսօր եկել է և թագուն կերպով մեր ոտներովն է փաթաթվում: Բայց ի՞նչու՞մ է բանը: Արանում, որ իր այդ ուղղակի մեզ արած զիմումներով ու աղաչանքներով, այդ պատաւ մարդակերը ցոյց է տալիս, թէ որքան մեծ է իր երկիւղը հայ յեղափոխականներից և թէ որ աստիճան ստորութեան, նոյն իսկ անձնապէս, պատրաստ է նա դիմելու, միայն թէ մի կերպ կարողանայ կասեցնել հայ յեղափոխական շարժումները: Աստեաւ, որ մարդկային կոտորածները, հէկատոմքներն իսկ անկարող եղան ընկձել հայ յեղափոխական ոգին: Ի՞նչ անել ուրեմն: Ազա՛ւ էլ հայ յեղափոխականին լուե՛լ, դրանու՞մ է սուլթանի գոյութեան միակ պայմանը, որպէս զի կարողանայ Աւրօպային ապասկել, ասելով, թէ այլ ևս չը կան հայ յեղափոխականներ, այլ ևս չը կայ հայ յեղափոխական շարժում և թիւրքիայում ամեն բան ընթանում է այնպէս, ինչպէս աշխարհիս դրախտավայել մի երկրում: Սուլթանն իր այդ անաւօթ ու աղուէսական զիմումներով պայծառ կերպով ապացուցանում է իր սկարութիւնն ու պարտութիւնը և ընդհակառակը՝ հայ յեղափոխական գաղափարի ու շարժման զօրութիւնը: Այդ ամենն այսօր այլ ևս թող լաւ իմանան մեր դէմ՝ յարձակվող մեր ներքին թշնամիները. թող լաւ իմանան, որ իրանց ուզածը նոյնն է, ինչ որ այսօր ինքը սուլթանն է մեզից ինդրում, այն է յեղափոխական քարոզների գաղարումը: Մեր հասարակաց կարծիքը վճատեցնողներն ու թունաւորողները ո՛րքան, ա՛հ, ո՛րքան լաւ ծառայութիւններ են մատուցանում սուլթանին:

Սուլթանի յատուկ պատգամաւորին և սրա միջնորդին մենք հրաւիրում ենք զնալ Երզրդ-Վէօշի և քիչ աւելի և քիչ էլ լաւ մտածել աշխատահիս ունայնութեան վրայ. թէ եթէ ինքը սուլթանը ծածուկ կերպով իր գլուխն է խոնարհեցնում մեր արջի և մասնաւոր, բայց և «պաշտօնական» կերպով «ընդարձակ բարեկրօնութեան» խոստումներ տալիս և ազաւանքներ անում, մենք էլ մեր կողմից քաջ զիտներ աղուէսի թաթերը յեղափոխական թակարդի մէջ պինդ բռնել ու սեղմել, մինչև որ նա ինքն, այդ պառաւ աղուէսը, իր հին հէքեաթներից ու խոստումների աջողական նէխիմ-նէյնիմներից այլ ևս զգլէ և իր արած դժոխային ոճրագործութիւնների համար ամօթով ու պարտված մնայ զայրացած մարդկութեան և արդարադատ պատմութեան առջև:

Մեր ներքին յարձակողներին էլ նոյնպէս հրաւիրում ենք քիչ աւելի և քիչ էլ լաւ մտածել այն սրտաշարժ ներդաշնակութեան վրայ, որ ունեն նրանք և սուլթանը՝ հայ յեղափոխական շարժումների ու զաղափարի նկատմամբ:

Իսկ մենք, յեղափոխականներս, այսօր աւելի քան երբ և է՝ ճանաչենք մեր իրաւունքը և մեր պարտականութիւնը մեր ազգի առջև, մարդկութեան առջև, պատմութեան առջև:

ՉԻՅԹՈՒՆՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ. ԲԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄ.

1895 ՆՈՅՄԲԵՐ 24-ԻՆ — 1 ՓԵՏՐՎԱՐ 1896.

(Շարունակութիւն) 1)

ԱՎԱԶ: ԿԵՏԻԿԻ, ՍԱՆԴՈՒԴԻ ԵՒ ՍՈՒՐԹԱՏԼԱՐ ԳԻՒԴԻ ՄԵԹ ՊԻՏՆԱԶՄՆԵՐԸ. — ԹՈՒՐԲԵՐՈՒՆ ԿՈՐՈՒՄՏԸ. — ԻԻԶԱՐԻ ԵՒ ՊԵՐԶԻՆԿԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ. — ԱԳ-ՏԱՂԻ ՊԱՏԵՐԱԶՄ. — ԷՇԷՔ ՄԵՏԱՆԻ ԱՄԵՆԱԿԱՏԱՂԻ ՊԱՏԵՐԱԶՄ. — ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՔԱՐԱՅՐՆԵՐՈՒ ՇՈՒՐԸ. — ՊԱՏԵՐԱԶՄ ԱՅԳԻՆԵՐՈՒ ՄԵՋ. — ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԶՕՐԱՆՈՑԻ. — ԶԵՅԹՈՒՆՅԻ ԿՈՐՈՒՄՏԸՆ ՈՒ ԿՈՒՈՒԻ ԵՂԱՆԱԿԸ. — ՊԱՏԱՆԻ ՀԵՐՈՍ ԻՇԽԱՆԱԶՈՒՆ ԱԻԷՏԻՔ. — ԹՇՆԱՄԻՆ «ԿՈՏՈՐԱՅԻ-ՉՈՐԻ» ՎԵՐԵԻ.

Ժամը ճիշդ 5-ի ատենները թշնամին սկսաւ իր ամենակատաղի երեք յարձակումները գործել վերոյիշեալ երեք կէտերի վրայ:

Ավազ կէտիկի ապաստանած Հայերը, Եէնի-տիւնեան Սարգիս աղայի Եղիայի և Սուրէնեան կարապետ աղայի առաջնորդութեամբ, նախապէս կատարի դիմադրութիւն գործեցին այն 4,000 զինուորներուն, որոնք երկու սիւնակով իրենց վրայ յարձակեցան: Ամբողջ յետերը այդ միջոցին ծուխով էր պատուած մի ամպամած օրուայ նման և հրացաններու ձայնը անդուլ գոռումի երեւոյթը կրնձայէր: Ինկան տասնեակ զինուորներ և մէկ ու կէս ժամուայ հերոսական

պատերազմէ յետոյ՝ երկու սիւնակն ալ ստիպուեցաւ երկու անգամ ետ նահանջել:

Իսկ այն 5 հազար զօրքերն, որոնք միաժամակ յարձակում գործեցին Սանդուղի կիրճի վրայ, ուր ապաստանած էին Զէյթունի ամենաընտրեալ քաջերը՝ հարիւրաւոր դիակներ թողլով գետնի վրայ, ստիպուեցան 3 անգամ ետ նահանջել. և ինչ գովելի ու հիանալի էր այդտեղ, որ Զէյթունի իշխանները նախա-յարձակներն էին և ամենէն ընտիր կռուողները... իշխանութիւնը ոչ միայն ընտանեկան, աւանդական և ունևորութեան առաւելութեանը մէջ էր. այլ և պատերազմական քաջութեան գերազանցութեանը մէջ: Հիանալի էր և գրեթէ անկարագրելի Նազարէթ իշխանի, Պապ աղայի և Կիւլփանէսեան Նազարէթ աղայի ցոյց տուած քաջագործութիւնները: Եւ համեմատել այս մեծերը ուրիշ քաղաքներու հայ ինքնակոչ քրջերուն... որոնք ժողովրդէն առաւել են միայն իրենց մեղկութեամբ:

Հերոսական ընդդիմադրութիւն գործեցին մէկ ժամ Մուրթատլար գիւղ ապաստանող Հայերը տասը հազար թշնամիին, որ իր հետ ունէր նաև 4 թնդանօթ: Ինկան հարիւրաւոր թշնամիներ և գիւղի առջևի ձորը լեցուեցաւ նոցա դիակներով: Սակայն թշնամին իր անհամեմատելի առաւելութեամբը գրոհ տալով՝ միշտ կը յառաջանար, որի թնդանօթներն ալ մեծապէս վնասեցին ու խարխլեցին հայերու ապաստանած տները: Գիմագրել այլ ևս անհնար էր այդտեղ, մանաւանդ նկատելի էր միշտ, որ թշնամին իր անմիջական պէտքերն ու օգնութիւնները փողերով կը կոչէր, իսկ հայերս մտնաւոր սուրհանդակներով, որոց մինչև հասնիլը, գործը տարբեր վախճանին կը հասնէր: Զի կարողանալով այլ ևս դիմադրել, գիւղի միւթարը ինք իր ձեռքով վառեց երենց տները և հայերը միացան Սանդուղի կիրճն ապաստանող եղբայրներուն, որ գիւղէն դէպի հիւսիս ուղղութեան վրայ կը գտնուէր, մէկ ժամ հերոսական պատերազմէ յետոյ:

Ավազ կէտիկի վրայ ապաստանող քաջերը իրենց երկու մղումներէն յետոյ, երբ իրենք պատրաստուած էին յարձակում գործելու, յանկարծ բերաւոր գրնդակներ սկսան տեղալ իրենց վերևէն ու ճակատէն: Սոսկալի կերպով պաշարուած էին թշնամիի ահաբեկիչ բազմութիւնէն: Ոչ որ չէր կարող գուշակել այդ ոյժի որտեղէն երևան գալը: Սակայն ի վերջոյ յայտնի եղաւ, որ Էրիճէկի 8,000 զօրքերը, միանալով մեծ բանակէն յառաջացող երրորդ սիւնակին, Աթլըք լեռան միւս կողմէն, մէկ ու կէս ժամուայ միջոցին անտեսանելի կերպով յառաջացած և պաշարած էին հայ քաջերը, որոնք այդ յանկարծական յարձակումին անվեհեր կերպով սկսան պատասխանել ամեն կողմէն: Հայերու թիւը հասել 400 էր, իսկ թշնամին 14,000: Գիմադրութիւնը տևեց կէս ժամ, սակայն հայերի վիճակը հետզհետէ ծանրացաւ, ուստի քաջերը ձեռքերով թշնամիի յետակայ շղթան, անցան դէպի Պերդինկայի լեռն և Իւզարի անցքը, կոտորելով հարիւրաւոր թշնամիներ:

Այդ տեղ ևս թշնամին յաջողելով, իր ահ-գին ոյժը բաժանեց երկուքի, որոց կէսը սկսաւ հետևել հայերին գնդերուն և կէսը գնալ դէպի ցած և պաշարել Սանտուղի կիրճն ետևի կողմէն: Նոյն ժամանակ Մուրթատլար գիւղէն դէպի վեր կը յառաջանային 10 հազար զօրքերը: Այսպէս ետևէն, առջևէն ու կող-

1) Տես «Հնչակ» 1895 թ. 23, 24 և 1896 թ. 1, 2, 3, 8, 9 և 10.

քէն, թշնամին մօտ 22,000, սկսաւ կասաղի յարձակում գործել առիւծասիրտ Հայերու վրայ, որոց թիւը հազիւ կար 1500: Կէս ժամ տեւեց այդ դժոխային պատերազմը և թշնամին կորսնցնելով հարիւրաւոր զօրքեր կրկին ետ սահալեց: Այդ տեղ էր ևս «Աւո» զօրագնդի մի մասը, որոց մէջ գովելի քաջութեամբ կռուեցան Պ. Միհրան Գայեանը, Սասունցի Նիկողոսն և Օհաննէսը, Քընտրճագի Դաւիթը, Մարաշի Զակար Տարաքճեանը և Ստեփան Տուռնեանը:

Արջապէս թշնամին գործեց իր հինգերորդ յարձակումը: Թէպէտ ինկան բազմաթիւ զօրքեր, բայց իրենց ահագին բազմութեամբ գրոհ տուին հայերի վրայ և կոտորուելով առաջացան, որովհետեւ զօրքերու յետակայ շղթային պատուիրուած էր սուինհար անել այն զինուորն, որ ետ կը դառնար: Այս արիւննուշտ յարձակման անկարելի լինելով զիմադրել—որովհետեւ թշնամին չէր հասներ կոտորելով—ստիպուած եղան հայերը ետ քաշուիլ և բարձրանալ Ագ-Տաղի և Էշէք Մէյտանի վրայ, ուր հասան ճիշտ ժամը 7-ին, երկու ժամ պատերազմելէ վերջ: Այդ տեղ միացան իրենց այն եղբայրներուն, որոնք սահմանուած էին այդ անցքի պահպանութեան:

Այս բոլոր պատերազմներու մէջ թշնամին կորսնցուց մօտ 700 զինուորներ, իսկ հայերէն մէկ հոգի միայն, փախած միջոցին, զառիվերի պատճառաւ շուշը կտրուած էր և մնացած, որ սպաննուեցաւ թշնամիներէն. դա. 18 տարեկան Արդիվաու Երկայնեանն էր, Տէր Կարապետ քահանայի որդին:

Այս յաջողութիւններէն յետոյ թշնամիի Աւ վախ մնացած ոյժն ալ, մօտ 40 հազար, սկսան յառաջանալ դէպի Ագ-Տաղ և Էշէք-Մէյտանի:

Թրքական բանակն այսպէս առնելով հայերու վերոյիշած զիրքերը, սկսաւ միահամուռ կերպով յարձակիլ դէպի Իւզար, Ագ-Տաղ և Էշէք-Մէյտանի, ուր կենդրոնացած էին Զէյթունցիներու մեծագոյն մասը:

Առաջին յարձակումը տեղի ունեցաւ ճիշտ Իւզարի անցքի և Պէրզինկեան լեռան վերի ծայրի վրայ: Ահագին բանակին հերոսաբար զիմադրեցին այդ տեղ փակող մի բուռ հայերը, թէպէտ իրենց զիրքը լերկ և ապաստանարաններէ զուրկ էր: Մի ժամ զիմադրութենէ յետոյ, շրջապատուելով Ագ Տաղի հիւսիսային ծայրը բարձրացած զօրքերէն, որ իրենց գագաթի վրայ կը նայէր, ստիպուեցան Հայերը տեղի տալ և քաշուիլ Եհնիստիւնեան Նաղարէթ իշխանի պատմական քարայրները, որոնք մի ժամանակ նշանաւոր ապաստանարաններ եղած են իր եղբօր Պապիկ փաշայի: Այդ քարայրներու հեռաւորութիւնը հազիւ կէս ժամ էր Իւզարի անցքէն:

Գրաւելով Ագ-Տաղի հիւսիսային ծայրը, թշնամին սխաւ այդ լեռան դէպի հարաւային կողմը յարձակիլ իր 20,000-ի ուժով, լեռան արեւմտեան կողմը, որ դէպի Զէյթուն կը նայէր կողմնակի կերպով, բոլորովին շատ բարձր գահավէժ էր կէս ժամ երկայնութեան վրայ:

Այդ տեղ ապաւինած քաջերն ալ պաշարուեցան այդպէս կողքէն ու ճակատէն. թէպէտ դորա ևս զիմադրեցին մի ժամու չափ, սակայն ստիպուեցան քաշուիլ միշտ հարաւ, և այդպիսով միացան Էշէք-Մէյտանին պաշտպանող հայերուն:

Ամենակատաղի պատերազմը տեղի ունեցաւ Էշէք-Մէյտանի վրայ. հայերու զիրքը լինելով ժայռերու

մէջ և այդ ժայռերու վրայ Ագ-Տաղի հարաւային գագաթը, թշնամին յարձակեց մօտ 40,000 զինուորներով: Արջին անցքն էր այդ, որտեղէն թշնամին այլ ևս վերջնականապէս պիտի անցնէր դէպի Զէյթուն, որն այլ ևս միշտ իր յանդիմանը կը լինէր:

Ամէն կողմէ ընդդիմադրութիւնը կատաղի եղաւ, ինկան տասնեակ զինուորներ. դժբաղտաբար մեր թնդանօթը միայն արտին մէջ զետեղել կարելի լինելով, հազիւ թէ սկսաւ իր գերը կատարել, բայց բաց դաշտի մէջ անհնար եղաւ շարունակել, ուստի իսկոյն բեռնցնելով իջուցինք դէպի Զօրանոց:

Այդտեղ էին կենդրոնացած իշխաններու մեծագոյն մասը, պատերազմի մէջն էր նաև Կուսակցութեան ներկայացուցիչ պ. Աղափն: Ամէն կողմէ խրախոսները կը գոռային: Ծուխը պատած էր ամէն կողմ և հազիւ թէ կարելի էր նշմարել զիրար:

Պատերազմը տեւեց ժամը 8-էն մինչև 10-ը: Թշնամին իր բոլոր ոյժը հետզհետէ կենդրոնացնելով այդ տեղ, հիւսիսի, հարաւի կողքերէն և ճակատէն անդադար կարկուտի նման գնդակեց և միևնոյն ժամանակ գրոհ տուաւ, որով քաջ Զէյթունցիները ստիպուեցան տեղի տալ և քաշուիլ դէպի Զօրանոց: Երբ անուսեցաւ այս անցքը իսկոյն քաշուեցան նաև Սաիր ու Անի-Զոր ապաստանող հայերն ալ դէպի Զօրանոց, որովհետեւ նոցա այդ անցքերու վրայ մնալն անօգուտ էր, քանի որ Էշէք-Մէյտանին այդ անցքերի վերէն ու կոնակն էր:

Իսկոյն բոլոր հայերը ցրուեցան և սկսան պաշտպանել ընդհ. Ժողովի Ծ-րդ որսման մէջ նշանակուած վայրերը: Այսուհետեւ թշնամին շուտով չի առաջացաւ դէպի Զօրանոց: Շատ քաջեր կրկին դառնալով զիմադրեցին տեղ-տեղ այգիներու մէջ, մինչև ժամը 11:

Սակայն նշանաւոր պատերազմ մղուեցաւ Նաղարէթ իշխանի քարայրներու շուրջ: Այդ պատերազմը մղողները գլխաւորաբար էին Եհնիստիւնեան ընտանիքի քաջերը, իրենց ազգականներովն ու թաղեցիկներով, մօտ 100 հոգի: Զէյթունի նշանաւոր ագոյի պատերազմներէն մէկն էր այդ, որ տեւեց մինչև ուշ գիշեր: Ամէն կողմէ շրջապատուած լինելով, առիւծասիրտ քաջերը չորս կողմ գոռալով ամէն կողմի վրան ալ կը թափէին, և սակայն թշնամիի բոլոր ոյժերը իրենց վրայ կենտրոնացած էր հետզհետէ:

Այդ միջոցին իրենց ձիերու վրայ էին Նաղարէթ իշխանը, Կիւլվանէսեան Նաղարէթ աղան և Վասիլոսեան Կարապետ իշխանը 70 տարեկան ծերունի, որը տեսնելով հայոց թուլութիւնը սկսաւ գոռալ. ո՞նք կը փախիք, ո՞նք անպիտաններ, ալ ո՞նք պիտի փախիք. այստեղ է վերջին տեղը, բոլորս հոս պիտի մեռնինք, որ վերջը թշնամին երթայ անի իր բոլոր շարքները մեր կիներուն ու երեսաններուն, սակայն այն պատուով, որ ալ մենք չենք տեսնար... և երբ այս երեք իշխանները քջեցին իրենց ձիերը դէպի քարայրները, հազարներ էին, որ հեռուեցան նոցա: Հասնելով քարայրները այդ օր թշնամին ոչ միայն ետ մղեցին, այլև աղատեցին այնտեղ պաշտպանուող հերոսները, որոնց կորստեան քիչ մնացած էր և եթէ նոքա կոտորուէին, նոյն այդ օր թշնամին կը գրաւէր Աստուածամնայ վանքը և գուցէ շուտով մտնէր Զէյթուն:

Ժամը 10-ի միջոցներին դժբաղդութիւնը ամէն կողմէ կը ծանրանար հայերու վրայ: Արդէն Քանուզն կատաղաբար կոտորուած էր թշնամիի կողմէ: Այնտեղէն փախողները գունդագունդ կը դիմէին Զէյ-

Թուն մերկ ու բուսիկ: Այդ միջոցին հասան նաև «Ա-
 ւո» զորագնդի ֆունուզ գնացած անդամները. վերա-
 դարձաւ Կուսակցութեան արի գործիչներէն պ Ա-
 պահը, փանահայր Բարդուղիմէոս վարդապետի և պ.
 Նշան Ղազարոսեանի հետ, որոց մ. սին արդէն առա-
 ւօտեան դէմ լուր կար թէ զարնուած են մեր սի-
 բելի ընկերներուն հետ, որոնք դեռ անյայտ էին և զա-
 նազան վշտակուելի լուրեր կը պատէր իրենց մասին:

Մեր քաջ ընկերներն անցնելով միջոցաւոր գըն-
 դակներու տակէն, երբ հասան, առանց յուսահատե-
 լու կրկին սկսան իրենց քաջութիւնները: Արդէն թըշ-
 նամին ժամը 11-ի միջոցներին սկսաւ գնդակահարել
 և ուժեղանալ Զօրանոց և իւր շուրջ նստող Հայերը
 որոնք անմիջական կերպով սկսան զուլաներով ամրա-
 ցընել այդ շրջակաները:

Այդտեղ սկսանք գործածել շատ աջող կերպով
 նաև մեր թնդանութիւնը. այլ կռիւն օրհասական էր
 և վերջին կէտի վրայ, սակայն ամենանշանաւոր ու վը-
 տանգաւոր կէտի վրայ: Թշնամիի առաջին երկրորդ և
 երրորդ սուսերը ողջունեցին սասունցիներու և պ.
 Մլխի սենեակներն, որոնք Զօրանոցի գեղատան կից
 էին: Իսկ մնացածները զանազան տեղեր նետեց, որոնք
 ոչ մի վնաս չի պատճառեցին:

Ընդհ. ժողովի 5-րդ. որոշման համեմատ պաշտ-
 պաններով նշանակուած անցքերը, թշնամի չի կարո-
 ղացաւ մի քայլ իսկ առաջանալ և մնաց իր տեղ
 մինչև գիշերուայ ժամը 1 և պատերազմը վերջ գտաւ:

Այդ օր թշնամիի հարիւրաւոր կորուստներ ու-
 նեցաւ, իսկ զանազան կէտերու վրայ, ամբողջ պա-
 տերազմներուն մէջ, հայերէն վիրաւորուեցան երկու
 հոգի, մեռան նոյնպէս երկու:

— Եւ սակայն անհաւատալի է. այնպէս չէ: Ահա
 իրողութիւնը:— Չեմ կարծեր թէ մէկը տեսած լինի
 մի տեղ Զէյթունցիներու պատերազմը: Երբ պատե-
 րազմը կըստի, Զէյթունցին գիտէ ինքզինքը պաշտպա-
 նել մի ափ քարի ետևն իսկ. երբէք Զէյթունցին բաց
 տեղ չի կուտիր: Պատերազմի միջոցին նորա մազերն
 իսկ չէք կարող տեսնել. նա պառկած կամ ծնրա-
 գրած է իր քարի կամ զուլայի ետև և այնպէս կար-
 ձակէ իր գնդակը. միայն կը տեսնէք մի տեղէ ծուխ
 բարձրանալը և կարող էք գուշակել թէ այդ տեղ մի
 Զէյթունցի կայ. կարծես թէ պատերազմի խուրդներ
 են, որոնք սողալով կը կուտին և կուտելով զուլա կը
 շինեն ու կը յառաջանան և եթէ յարձակուած գործել
 ուզեն, յանկարծ այդ խուրդները կատարի մարդիկ կը
 տեսնէք ձեր դէմ, որոնք անխթարթի թեթեւ շարժում-
 ներ ու պարձուածներ ունին:

Իրենց գլխաւոր աջողութեան մի պայմանն ալ այն է,
 որ ամեն մի պատերազմի մէջ և սկսած պահուն, յան-
 կարծ կաղաղակեն միաբերան, զուլայէ զուլա, անդա-
 դար կերպով՝ «ղաչող հա, զաչող հա, զաչող հա,
 զաչող» — Իստով հօ, Իստով հօ, Իստով հօ, Իս-
 տով — խօսքերը և այս պարբերական աղաղակով Զէյ-
 թունցին շատ յաղթանակներ է տարել թշնամիի վրայ,
 ահ ձգելով նորա մտքին ու սրտին մէջ: Այսպիսի մէկ ա-
 զաղակով են փակցուցեր Աղիզ փաշայի բանակը:

Երկու ոյժ ունի այդ «ղաչող հա, զաչող» խօսքը.
 — Նախ ոյժ ու քաջալեր կըտայ իրենց եղբայրնե-
 րուն, որոնք զանազան կէտի վրայ կը կուտին և կար-
 ձելով թէ իրաւամբ թշնամիի մի մասը փախած է,
 իրենք ալ կսկսին աւելի աներկիւղ կուտիլ ու սիրա-

ստանալ. երկրորդ, թշնամիի զանազան մասերը շիտ-
 թուութեամբ մէջ կընկնեն առանց զիրար տեսնելու, թէ
 արդեօք վարի մասն է, որ փախած է և վարի մասն ալ
 փոխադարձը կը կարծէ վերի մասին համար, և այսպի-
 սով երկուքն ալ միաժամանակ երկիւղի մէջ կընկնին ու
 կը փախչին:

Այդ խօսքերէն վերջ Զէյթունցին կըստի նաև իր
 երկրորդ ահաբեկիչ խօսքը — «Ալահ, Ալահ, Ալահ
 ալ»... և գոզակն արձակած ատեն — «Ես Ս. Փրկիչ»
 իրենց Ս. Փրկիչ վանքի անունով:

Ահա այդ պատճառաւ է որ Զէյթունցիներէն այդ-
 բան քիչ կորուստ տեղի ունեցաւ բարեբախտաբար:

Երկրորդ մեռնող հերոսն էր Պապիկ փաշայի որ-
 դի Եէնիտիւնեան պ. Աւետիքը: Քարայրներու
 պատերազմի միջոցին, երբ շատեր կուգէին փախչել,
 դեռ պատանի և առիւծասիրտ Աւետիքը նստած էր
 զուլայի ետև, անդադար կրակ կը տեղար թշնամիի
 վրայ: Նոյն իսկ իր մեծ եղբայր Աւետիքը երբ կա-
 ուաջարկէր իրեն թէ այլ ևս «անխտհամութիւն է ըս-
 պասել, ել երթանք», կտրիճ Աւետիքը կը պատաս-
 խանէ. — «Գլնօ կըշնուէ, էս տեղոց ըլլուէ, չէնէ քե
 կու կըպըննմ. ևս գիտեմ թէ քու քեռիդ վով է (1)
 — (գնա՛ կորսուիր, այս տեղէն հեռացիր, ապա թէ
 ոչ քեզ կը զարննմ. ևս գիտեմ թէ քու քեռիդ ով է):

Եւ պատանի իշխանազունի այդ գառն խօսքերը
 կըստիպեն շատերն, որ նստած շարունակեն իրենց
 պատերազմը. սակայն, աւանդ, որ մի անողք գնդակ
 ճիշդ զուլայի ծակերէն անցնելով եկած և մտած էր
 այդ պատանի հերոսի ծծի պտուկէն և ծակելով
 թորը գուրս եկած էր թիկունքի ստորոտէն: Քաջ զիւ-
 ցազունը մի քանի վայրկեան ևս կուտելէ յետոյ ու-
 ժասպաւ կը լինի և հրացանը վար կընկնի ձեռքերէն,
 Իսկոյն կը վերցնեն զինք և կը տեսնին վանք, ուր Յ
 ժամ պառկելէ յետոյ մեռաւ նա, ի վիշտ ամբողջ
 Զէյթունի:

Պատանի Աւետիքը 17 տարեկան էր և դեռ ու-
 սանող Միաց. Ընկերութեանց Զէյթունի բարձրագոյն
 նախակրթարանին: Իր ստացած կրթութեան հետ նա-
 րա ունեցած բնական ձիրքն ու բարեմասնութիւնները
 արդէն զինք կը ներկայացնէին շատ հասուն մարդ:
 Օրինակելի և անսովորաբար է Զէյթունցիներուն նորա
 աղնուութիւնը, վեհանձնութիւնը, պարկեշտութիւնը,
 մանաւանդ ժողովուրդասիրութիւնն ու հայրենասիրութիւնը:
 Իր այդ մատաղ հասակի մէջ նա արդէն այնքան հա-
 մարձակ ու քաջ էր, որ առաջի տեսնողը կարող էր
 ասել թէ, իրաւ «Առի՛ ծի ճշմարիտ կորիւնն է այդ»:

Այդ բարեմասնութիւններէն զատ նկատելի էր
 Աւետիքի հասակն ու գեղեցկութիւնը: Պապիկ փաշան,
 որ իր ժամանակին Զէյթունի ամենագեղեցիկն ու հա-
 սակաւոր մարդն եղած է, զայն տեսնողները կը վկա-
 յէին Աւետիքի գերզանցութիւնը: Կարելի է սսել,
 որ ոչ միայն Զէյթունի մէջ, շրջակաները տեղեր չը
 կար նորա աննական գեղեցկութիւնն ունեցող մարդ-
 սարգերու մէջ փայլող մի կենդանի արև էր նա: Իսկ

(1) Պապիկ փաշան երկու անգամ ամուսնացած է. առաջին
 կնկայ անդամնիւղ Աւետիքն է ևս երկրորդի անդամնիւղ Աւե-
 տիքը: Սովորութիւն է այդ կողմեր, որ մէկի քաջութիւնն ու երկը-
 տութիւնը, խելացութիւնն ու տղաութիւնը կը վերադարձնեն միջո-
 քեռիներուն, իբր ժառանգ մօր կողմանէ: Թէպէտ ան ուրանա-
 ւի է, որ Աւետիքն ալ Զէյթունի ընտրագոյն քաջերէն մէկն է:
 Ժ. Թ.

հասակի մասին կարելի է ցոյց տալ Տօրոսի մի մայրի ծառը, իր բարեձևութեան հետ:

Իր հօրեղբայր Նազարէթ իշխանը, որ գիտէ պաղարիւն լինել ամենակատարի պատերազմի մէջ իսկ, որ ամենագառն ժամերուն մէջ իսկ ազնուութիւն ունէր և անտրտունը էր, միշտ կը կրկնէր սակայն.

— «Արանի թէ մեր ամբողջ հարստութիւնը ոչնչանար, երանի թէ իմ զաւակները մեռնէին և Աւետիքը կենդանի լինէր»... Նա իր յոյսը, ասպետական յաջողութեան յոյսը Աւետիքի վրան էր դրած:

Աւետիքը նշանուած էր Աւսիլոսեան իշխան Պապ աղայի աղջկան հետ և այս տարի նա կունենար իր ամուսնութիւնը, սակայն ապստամբութիւնն արգելք եղաւ այդ ուրախալի օրին և ծածկեց մահուան սև քողով... Թէպէտ բարոյապէս անմահ քողով:

Աւետիքը թաղուեցաւ Զէյթունի Ասուածածնայ վանքի մէջ իր հօր գերեզմանի քով, որոց առաջ կը խոնարհի ամէն-մի հայրենասէր հայու գլուխը... Այդ անմուսաց ընտանիքի յիշատակի առաջ, որ Տօրոսի կարելի է ստել և հայութեան վերջին յոյսն ու ազատութեան նշոյլն եղած են և ամէն անգամ իրենցմէ մէկն է հանդիսացած Զէյթունի մէջ ժողովրդի պաշտպան վայրագ թշնամուն դէմ:

Այս այս տողերով՝ մեր խորին սէրն ու յարգանքը կարտայայտենք վաղամեռիկ մեր հերոս ընկերի անմուսաց յիշատակին:

Երբ հայերն օգնութեան հասան քարայրներու շուրջը կուռող իրենց եղբայրներուն, վանքը շրջապատող թուրքերը յետագայ կողմէն, և գիշերուայ դէմ քաջ պատերազմիկները զերծտնելով վտանգէն, քաջուեցան դէպի Աւանք և Քարթ օշ-Քօր, որ ամենայարմար, ամենավերջին և ամենանեղ կէտն էր Զէյթունը պաշտպանելու իր հիւսիս-արևելեան կողմի վրայ:

Այս քաջուած միջոցին՝ հայերը, սկսան բարձրաձայն կոչել սոցա հեգնական ոճով.

— «Հրամեցէք, հրամեցէք, առաջ եկէք, կէս ժամ մնաց Զէյթունն առնելու և մեզ կոտորելու»:

Իսկ թուրքերը չի նայելով այդ օրուան մէջ իրենց ձեռք բերած այնքան յաջողութիւններուն, սկսան պատասխանել.

— «Խընդըր կեափուրլար, սանքի գաչըյորսունուզ. պիզի մը ալտատաճաքսընըզ, պիզի մը չէքէճէքսինիզ. պիզ պիլիբիզ էսնիւմիւզտէքի տէրէյի. պիզ էնմէյիզ Ղըրըմ-Տէրէսինէ» — (Խող կեափուրներ, իբր թէ կը փախիք. մեզ պիտի խաբէք. մեզ պիտի քաշէք. մենք գիտենք մեր տոջւի ձորը, մենք չենք իջներ Ատորածի-Չորը):

Գա այն Չորն էր, ուր միայն կոտորուած ու փախած էին Ազիզ փաշայի 40,000 Ձէրքէզները, չորս օրուայ միակերպ յաջողութենէ վերջ Զէյթունցիներու վրայ: Անցիալ յաղթանակը այնքան խոր տպաւորութիւն էր թողած թշնամիի վրայ, որ երբ հասաւ այդ պատմական վայրը, Ատորածի-Չորի վրայ, մեծ սարսափով կանգ առաւ և հայերի նահանջը բոլորովին վարպետութեան վերագրեց, վախնալով վճռական յարձակման և վերջնական գրաւման յանդուգն և ամենայարմար ժամանակի փորձը կատարելու.

(Կը շարունակվի)

ՏՕՐՈՍԻ.

ՆՇԱՆԱԻՈՐ ՊԱՏԵՐԶԱՄՆԵՐ ՖԻՆՈՒՉԻ ՄԷՋ.

Նորէն վերագառնանք Ֆրոնուզ:

Դամը տասնի անենները Ֆրոնուզի մէջ տեղի կունենար սոսկալի պատերազմը: Աղալը-էն եկող թըլը-նամի բանակը ճիշտ Ֆրոնուզի դէմը կը գտնուէր մէկ ժամ՝ տարածութեամբ բլուրների, ապառաժների և ձորերի մէջտեղ ցրուած: Հայերի և թիւրքերի մէջտեղ կը գտնուէր միայն Ֆրոնուզի գետակը, որն իր ահագին խորութեամբը մի մեծ անջրպետ և պատուար կը դառնար թիւրքերի առաջխաղացութեան: Գետի կանտարէն կարուած էր և թիւրքերին Ֆրոնուզ գրաւելու համար հարկաւոր էր 50 մէթրի չափ բարձրութիւն ունեցող զառիվայրէն ցած իջնել, անցնել գետակը և նորէն նոյնքան դէպի վեր բարձրանալ. սա այնքան հեշտ էր թիւրքերի համար:

Դամը տասնուկէսի մօտերը պատերազմը իր ամենածանր աստիճանին էր հասած: Թնդանօթներն անընդհատ և արագաբար կորձակուէին թշնամու կողմէն, որոնց ուռմբերը ահագին Փըշփըշոցներ հանելով կը գային կը պայթէին հայերի աների վրայ, փողոցների մէջ, մարտկոցների առջև. իւրաքանչիւր ակնթարթի մէջ հազարներով զնդակներ կը թափուէին մեր վրայ, ինչպէս անձրևները աշնանային օրերի մէջ: Թնդանօթների և հրացանների ծխէն մի թանձր մշուշ էր գոյացած ամբողջ Ֆրոնուզի և գետի երկարութեանը վրայ, այնքան թանձր, որ ձմեռնային արևի մեռած ճաճանչներն անկարող կը լինէին թափանցել դէպի վայր. այլ ևս իրար չէինք նշմարել, կարծուէր թէ գետի երկու եզերքները բլուրները, ժայռերը, այգիները ցանկերը կայրուէին, հրդէհ կը լինէր: Մենք մեր գնդակները կը նետէիք հոն, ուր ծուխը խիտ էր և օղակ-օղակ կը բարձրանար դէպի վեր: Հաղարաւոր ձայների անընդհատ տևողութենէ առանձին մի ձայն չէինք հարող զանազանել. կը թուէր թէ երկինք միշտ կորոտար, ամպերը կը գոռային: Երևակայեցէք թնդանօթների, հազարաւոր հրացանների պայթիւնները, աշնանային անձրևներէ յորդած, փրփրած գետակի գոռում գոչումը, որն իր երկու ափերը ձեծելով օձի նման կը սահէր, կը գլորուէր դէպի ցած. հազարաւոր տաւարների խառնիճաղանձ ձայները, բազմաթիւ շների հանջիւնը որոնք հաւաքուած էին գիւղի շուրջը և փողոցների մէջ: Մինչ այդ ժամանակ կը լսուէին քահանաղերի, գիւղապետների խրախուսական ձայները, երգերը, հաւարները, եկեղեցու մէջ հաւաքուած բազմաթիւ բարեպաշտ ժողովրդի բարձրաձայն աղօթքը, հսկումները և շարականները...

Մեր գնդակները պարապ չէին ելլեր. քիչ կը նետէինք, սակայն չէինք վրիպէր, որովհետև նախ հայերը լաւ նշան կառնէն, երկրորդ թշնամին իր հազարներով յայտնի մեր դէմն էր կանգնած. նա միայն իր անհամեմատ աւելի բազմութեան էր վստահացած. իսկ մենք մեր զուլանների տակն էինք, մեր գլխի մազերն իսկ թշնամին չէր կարող նշմարել. անոր հազարաւոր տաք գնդակները թափուելով մեր շուրջը, զարնուելով մեր զուլանների բարերին, հոն կը տափակնային...

Թշնամին կատաղած մի քանի անգամ փորձեց գետը անցնելով ուղղակի յառաջանալ մեր վրայ, սակայն իւրաքանչիւր անգամին ետ մղուեցաւ գիւղացիների հերոսական դիմադրութենէն. կուռի ամենա-

տաք ժամանակի մէջ անգամ կանոնաւոր կերպով կը բաշխուէր ջուր, գինի, պատերազմական ուղղամթերքը՝ փամփուշտ, վառօթ, գնդակ ևն. . . Այսպիսի ծառայութիւններ կը կատարէին պատանիները, անգէն երիտասարդները՝ վազվզելով գնդակների, ուժեղների տակով:

Այս միջոցները, վանքի բլուրներէն, Ֆրոնուզի հիւսիւսային կողմէն սկսան դէպի գիւղ թափուել հարիւրաւոր գաղթականներ-կիներ, տղաներ, ծերեր, որոնք մի քանի ժամ առաջ մեկնած էին Զէյթուն ապաստանելու համար. ինչպէս վերել յիշեցի, Թէքերի կողմէն եկող թրքական բանակն ալ յառաջանալով և Զէյթունի ճանապարհը կտրելով՝ իրենք ստիպուած են եղել Ֆրոնուզ վերադառնալ:

Մեր վիճակն այլ ևս ծանր էր որովհետև թշնամին մեր ետևի կողմէ ալ կը գար: Մեր երեք չորս հարիւր կտրիճներով կարող էինք պաշտպանուել օրերով այդ տասն հազարի դէմ, մինչդեռ այժմ ամեն կողմերէ կը պաշարուէինք. . . Գաղթականների երևալէ յետոյ հեռուէն երեւցին երեք ձիաւորներ, որոնք արագ վազքով բլուրներէն վար կիջնէին: Այդ ձիաւորներն էին պ. Ապահը, պ. Նշանը և Բարդուղիմէոս վարդապետը, որոնք Թէքերի պատերազմէն վերադառնալով ուզեր էին Ֆրոնուզ իջնել. սակայն անկարելի լինելով Ֆրոնուզ իջնելը ձիերի ընթացքը ուղղեցին դէպի Զէյթուն: Ճանապարհին, երբ գետի վարի կողմէն կանցնէին, թշնամին հարիւրաւոր գրնդակներ թափեց անոնց վրայ, սակայն ոչ մի հաստը չը դպաւ. միայն պ. Ապահի ձին երկու տեղէ թեթև կերպով վիրաւորուեցաւ:

Ժամը 11-ին ամեն կողմերէ պաշարուած էինք. այդ հաստատուն մարտկոցները մեզ չէին բաւեր այլ ևս, մեզ չէին պատսպարեր ու պահպաներ թշնամու գնդակներէն. թշնամին գրաւած էր բարձր բլուրները, անցքերը, ձորերը շնորհով իր ահագին բազմութեան. կտրիճները շիթուեցան. կիները, երեսաները ծերերը կուլային, կողբային. . . Միայն մի յոյս, մի ապաւեն ունէինք այդ օրհասական, ծանր պարագայի մէջ հազարաւոր ժողովուրդին փրկելու համար կատաղած գաղանների ձիրաններէն: Գեռ գիւղի արևմտեան կողմը գտնուած սարերը թշնամին չէր գրաւած. եթէ այդ լեռներն ալ յաջողուէր գրաւել միաժամանակ կը կարողանար կոտորել մեր ամէնը. . .

Լեռների ստորոտը գիւղէն և զուլաներէն 3-4 հարիւր մէթրի չափ հեռի էր: Պ. Հրաչեան, իր հետ ունենալով յայտնի Շիվիկեցի հերոս Կարապետը նոյն գիւղացի Աշք-Ղազարը ուրիշ կտրիճներ, յուսահատական փորձ արին բարձրանալ լեռները: Մինչև հոն հասնելը և լեռը բարձրանալը թշնամին հազարաւոր գնդակներ, ուժեղներ կը տեղացնէր անոնց գլխին, նա մանաւանդ, ճանաչելով անոնց ուղքեր լինելը իրենց զինւորական զգեստներէն. . . Ժամը 11 ու կեսին գրաւելով մի քանի ամենակարեւոր դիրքեր այդ լեռների վրայ սկսանք անընդհատ հրացանաձգութիւն և յուսահատական կռիւ լեռներէն դէպի վայր: Հիւսիսէն յառաջացող թշնամին որ քիչ էր մնացեր գիւղ մտնել, ստիպուեցաւ յետ նահանջել: Մինչև մութը կոխելը հայերի կողմէն միևնոյն արագութեամբ կը շարունակուէր հրացանաձգութիւնը լեռներէն դէպի ցած, որով նախ թշնամին անկարող կը լինէր գիւղ մտնել երկրորդ հարիւրաւոր, հազարաւոր գիւղացի մայրեր, գրկած իրենց երե-

խաները, երիտասարդներ, ծերեր կաճապարէին շուտով բարձրանալ և ապաստանիլ լեռների մէջ. . . Թրշնամին իր բոլոր հրացանների կրակը կը թափէր լեռը ապաստանող հայերի գլխին. . .

Այսպէս մինչև գիշերւայ ժամը մէկը պատերազմը շարունակուեցաւ. այդ օրը թշնամին անկարող եղաւ գիւղ մտնել: Վերջապոյսի միջոցները մի խումբ թիւրք զինւորներ՝ չէրքէզներու և պաշտպանների առաջնորդութեամբ ճիգ արին ու փորձեցին բարձրանալ լեռները, և սուիներով, դաշոյներով կոտորել հայերը, սակայն ասոնք յաջողեցան բացի հրացանների քարեր գլտորելով կոտորել անոնցմէ շատերն և մնացածները ալ փակցնել: Հայերը սպաննուած թիւրքերի զէնքերը կողպատեցին երբ բոլորովին մութ եղաւ:

Խրիկնադէմին երբ երբեմն կընդհատուէր կամ կը մեղմանար հրացանաձգութիւնը, խուլ որոտներով մեզ լսելի կը լինէր Զէյթունի կողմէն թնդանօթների արձագանքը, որով կը հասկնայինք թէ թշնամու միւս բանակն ալ միաժամանակ յարձակում է գործեր դէպի Զէյթուն:

Չը մոռնամ այստեղ յիշել, որ Զէյթունի Կարկար թաղէն 70-80-ի չափ կտրիճներ, Անդրեասեան Փանոսի և յայտնի Տ. Յակոբեան Պ. Կարապետի առաջնորդութեամբ մեղ օգնութեան էին եկեր. սակայն, թշնամին նախապէս կտրած լինելով Զէյթունի և Ֆրոնուզի մէջ գտնուած Թէքերի գետակի կանտարէն և անցքերը, բաւական պատերազմելէ յետոյ անկարող լինելով մեր կողմն անցնել՝ վերադարձեր էին Զէյթուն: (Վը շարունակվի.)

Հ.-Մ.

Մ Շ Ո Յ Վ Ի Ճ Ա Կ Ը .

ՄՇՈՅ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ ՊԱՇՏՕՆԱՆԿՈՒԹԻՒՆԸ. —
ՄԱՏՆՈՒԹԻՒՆ, ԽՈՒՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ
ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՄՇՈՅ ՄԷՁ. —

Մուշ, 25 մարտ 1896.

Աշնանէ ի վեր քաղաքիս և գիւղորդեց մէջ Թուրքաց կողմէ տեղի ունեցած բարբարոսութիւնը և խրժգժութիւնը օրն օրին համառօտակի իմացուցած եմ ձեզ. այժմ որ այնպէս կը խօսուի թէ Սուլթանը իր շնորհած բարենորոգումներ ի գործ պիտի դնէ եղբր մեր կողմեր, և արդէն սկսած է կատարել, այդ «բարենորոգումներու» արդիւնքները կուգամ ներկայիս ձեզ իմացնել: Յունուար 11-ին Մշոյ զինուորական և թուրք խուժանը համաձայնութեամբ ուղած էին Հայերը կոտորել. բայց տեղոյս փաշայի ջանից շնորհիւ առաջին առնուեցաւ. յայնմհետէ թէ զինուորական փաշաները և սպաները և թէ թուրք ժողովուրդը բողոքեցին ի կայս. պաշտ թէ միւթէսարը՞ը Հայու զաւակ լինելով Հայեր կը պաշտպանէ և չի թողուր որ մենք մեր ուղածին պէս ջարդենք զանոնք: Այս բողոքներ անլսելի չի մնացին, և ահա ամուս 20-ին Պոլսէն եկած հեռագրի մը համաձայն, փաշան ընդ հսկողութեամբ ասկէ հանեցին, առանց թողուր որ իր ընտանեաց վերջին բարև մ'իսկ տայ, և իր տեղ իբր փոխանորդ կարգուեցաւ Բաղդէն ընդհ. դատախազ Համտի էֆ. որ ծանօթ է իր անիրաւութեամբ, կաշառակերութեամբ և հազարաւոր Հայեր բանտարկելու և տանջելու գործողութեամբ: Սուլթանը նկատելով որ քաղաքիս կառավարիչը իր նպատակի համաձայն չի գործադրեր «բարենորոգումները», զայն պաշտօնանկ ընելէ վերջ՝ իբր բանտարկելու Պոլիս տարաւ. հոս Թուր-

քերը կը խօսին թէ անոր արժանաւոր պատիժը ծո-
վածոյն մեռելիք է:

Մասնութիւնը որ մեր ազգին մէջ աներեւա-
կայելի վնասներ պատճառած է և անդարմանելի կո-
րուստներ կրել տուած է մեզ, իր պաշտօնեաները
քաղաքիս մէջն ալ ունեցաւ: Բնիկ մշտցի Անթա-
ռամեան Միսաք և բաղէշցի Պօղոսեան Մուրատ անուն
երկու անձեր, որոնք ասկէ առաջ բանտարկուած էին
նշանաւոր մասնիչ դէ Բարսեղի սպանութեան գործին
սատարող լինելու ամբաստանութեամբ, և ասոնց հետ
Յրօնք գիւղացի Պետրոս անուն անձ մը, որ իբր թէ
նախապէս հրամաններ ստացած է եղեր սպանելու
այդ անարժան քահանան, յունուարի 27-ին կառա-
վարութեան իմացուցին կարգ մը Հայերու անուններ իբր
յեղափոխական գործիչ անդամներ, փոխարէն կառավա-
րութենէն խոստում ստանալով իրենց ազատագրման:

Սուկալի օր մըն էր այդ օրը. խեղճ զինուորա-
կան վիճակի փոխուեցան ամբողջ Մշոյ հայ թաղերը
և 20-30 հօգուոյ տուն խուզարկուեցաւ միահաղոյն:
Բայց գրաւուած թուղթերուն մէջ վնասակար բան չի
կրցան գտնել. միայն Տուշեան Եղիազար անունով անձի
մը վրայէն քանի մը կասկածելի թուղթեր գտնուեցան,
որոյ հետևանքով բանտարկուեցաւ յիշեալ անձը: Նոյն-
պէս փետրուար 16-ին բանտարկեցին տեղւոյս վա-
ճառականներէն Բուէեան հաճի կարապետ և Միսաք ա-
նունով անձերը, որոնք իրենց հարստութեան պատճա-
ռաւ այս չորրորդ անգամն ըլլալով կը բանտարկեն և
հարիւրաւոր ոսկիներ առնելէ վերջ կը թողուն. այս ան-
գամ թէ որքան որոշած են փրկանքը, դեռ յայտնի
չէ. իսկ տուները խուզարկուած միւս Հայեր աղատ
թողուեցան, անոնց դէմ չի գտնալով որ և է ապացոյց:
(Կը շարունակվի) ԱՄՄ ՍԱՐ.

ԱՊՍԱՍՄԲՈՒԹԻՒՆ ԿՐԵՏԵՈՒՍ.

Արեւելի մէջ ապստամբական շարժումը հետզհե-
տէ կրկնի ստանալ ծանր կերպարանք և մեծ հա-
մեմատութիւններ:

Սֆ քեր նահանգը բոլորովն ապստամբական
վիճակի մէջ է. Վամօսի պահակ զորագունդը, բաղ-
կացած 1300 թուրք զօրքերէ, ապստամբներէն պա-
շարուած և շատ նեղ գրուութեան մէջ ինկած է. պա-
շարողներուն թիւը հետզհետէ կը ստուգանայ, վասն-
զի այդ կարևոր ռազմագիտական դիրքը գրաւելով
կրետացիները ձեռք պիտի ձգեն մեծաքանակ զէնք և
ռազմամթերք: Վամօսի բերքը պաշարող ապստամբ-
ները ցրուելու համար զրկուած թուրք և անար զօր-
քերը մեծ կորուստներով ետ մղուեցան: Ասոնք կա-
տարած Հանսաի մէջ սկսան կոտորել քրիստո-
նեաները. փողոցներու մէջ արիւնահեղ կոիւններ տե-
ղի ունեցան. քրիստոնէից կորուստն է 25 մարդ,
Թուրքերուները միայն 4: Բազմաթիւ վերաւորեալներ
երկու կողմէն: Սպաննուոյններու թուին մէջ կան նաև
ռուսական, ֆրանսական և հելլենական գազանները
և ուրիշ օտարահայտակներ:

Ռէթիմօյի կացութիւնն ալ ասպնապալի է. Մահ-
մետականները իրենց գեղերը թողլով՝ կապստանին
բաղաքը և կըսպանան կոտորել քրիստոնեաները՝ որոնք
տուներին փակուած՝ մեծ սարսափի մէջ են վերջին
յուրերու համեմատ կոտորածն արդէն սկսած է այդտեղ:
Աղլիին ամէն կողմը խիստ պաշարման վիճակ կը

տիրէ և յարաբերութիւններն ընդհատուած են:

Ար հաւաստեն թէ երեք ուրիշ զօրանոցներ ալ
պաշարուած են կրետացիներու կողմէ — Գ.Ս.Ն.Ս.
նոս, Բիսամօս և Պուքօլիս: Հանեայի առաջին
արիւնայի դէպքերէն վերջ, նոր անկարգութիւններ
ալ պատահած են նոյն քաղաքին և շրջակայ գիւղե-
րուն մէջ. բայց այդ նոր կոտորածներու զոհերու թու-
ին փոյ ստոյգ մանրամասնութիւններ կը պահսին:

Պառավարէ Թուրիսան փաշան քանիցս առաջար-
կած է բանակցութեան մտնել ապստամբականներուն
հետ, բայց անոնք մերժած են:

Եթէնք գտնուող կրետացիները սաստիկ յու-
զում՝ միթիւններ կընեն և հելլեն կառավարութեան
ուշադրութիւնը կը հրաւիրեն կողմին վիճակին վրայ:

Թուրքական նաւեր շարունակ կանոնաւոր և անկա-
նան զօրքեր կը փոխադրեն կրետէ: Ելլեմտական տագ-
նապը չներեր Դրան աւելի լուրջ միջոցներ ձեռք առ-
նուլ: Մեծ իրարանցում կը տիրէ թուրք կառավարա-
կան շրջանակներուն մէջ:

Մեծ պետութիւններու մէկ-մէկ մարտանաւեր ի-
րարու ետևէ կը հասնին Հանեա և Միջերկրականի
անդլիական նաւատորմին ալ Մայթայէ մեկ ելուն վրայ
է դէպի կրետէ: Միջերկրականի Իտալական նաւատոր-
մին այ հրաման ստացած է անմիջապէս մեկնելու դէպի
կրետէի ջուրերը: Այս կերպով արեւելեան խնդիրը
կրկին կը բացուի:

Մերքի սրտէ համակրելով մեր կրետացի եղբայր-
ներուն ապստամբական շարժումին, կը գոչենք՝ «կեցցէ
կրետէ»:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ.

ՏԵՌՕՐԱԿԱՆ ՆՇԱՆԱՒՈՐ ԳՈՐԹՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.

Վանից մեզ տեղեկագրում են հետևեալը.

«Վանայ Հնչակեան Մասնաձիւղի Վարչու-
թեան որոշումով մահուան դատաւարուեցաւ և
սպաննուեցաւ յայտնի մասնիչ և դաւաճան
կարապետ Նալբանդեանը: Տէնօրիսալ ա-
ղատ է և ժողովրդի ոգևորութիւնը՝ աննկարագրելի:»

Մանրամասնութիւնները «Հնչակ»-ի յաջորդ
համարում:

Կ. Պօլսից մեզ տեղեկագրում են հետե-
ւեալը. —

«Երէկ դիշեր, 10²² մայիսի, Կ. Պօլսոյ Հնչ-
ակեան Մասնաձիւղի Վարչութեան որոշման
համաձայն, սպաննուեցաւ յայտնի լրտես և
մասնիչ Արաբկիրցի Սեդրաք Յակօբ Աջդ-
պաշեանը, Հնչակեան տէնօրիսալի դաշոյնով:
Տէնօրիսալ աղատ է: Մանրամասնութիւնը նա-
մակով:»

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ
և դրամ ու մանդատ ուղարկել հետևեալ հասցեով. —
M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush.
London W. [Angleterre].

ՏՊԱՐԱՆ «ՀՆԶԱԿ»-Ի. ԼՕՆԻՕՆ.